Նոտարական ակտի կոդ: 779-20190909-37-4154840
Նոտարական ակտի գաղտնագիր: D87X5E

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆԻՆԸ ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ԻՆՆԻՆ

Մի կողմից ՀՀ քաղաքացի **ԳՐԻԳՈՐ ՍՊԱՐՏԱԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԸ, ծնված՝ 28/02/1971թ-ին, ՀԾՀ՝ 3802710126, անձնագիր՝ AK0542420, տրված՝ 023-ի կողմից, 29/06/2010թ-ին, հաշվառված՝ ԱՐԱԳԱԾՈՏՆ, ԱՊԱՐԱՆ, ԱՊԱՐԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ Փ., 19 Շ, 21ԲՆ , (այսուհետ՝ վարձատու), և**

**Մյուս կողմից ՀՀ-ն ի դեմս Հարկադիր կատարումն ապահովող ծառայության/գտնվելու վայր ք. Երևան, Հալաբյան 41/ա/ Արագածոտնի մարզային բաժնի պետ, արդարադատության գնդապետ ՏԱՐՈՆ ՍՊԱՐՏԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ, ծնված՝ 03/02/1980թ-ին, ՀԾՀ՝ 1302800108, անձնագիր՝ AM0822035, տրված՝ 057-ի կողմից, 30/07/2012թ-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՅԿԱՇԵՆ, 4 Փ., 7 Տ / ծառայողական վկայական՝ 04/20/, ով հանդես է գալիս 03/09/2019/ երկու հազար տասնինը թվականի սեպտեմբերի երեքին/ տրված ԽՎ 6353 լիազորագրի հիման վրա,, (այսուհետ՝ վարձակալ) (այսուհետ՝ կողմեր),**

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել իր սեփականությունը հանդիսացող, ՀՀ, Մարզ Արագածոտն, համայնք Ապարան, ք Մ Բաղրամյան փողոց 25/1 ա խանութ հասցեում գտնվող անշարժ գույքը, բաղկացած՝ 50,86 / հիսուն ամբողջ ութսունվեց տասնորդական/ քմ սեփականություն հանդիսացող խանութից, նպատակային նշանակությունը՝ հասարակական, և 0,006814 հա մակերեսով սեփականություն հանդիսացող հողամասից, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, այսուհետ՝ «Գույք»:

1.2.Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է ՀՀ Կառավարությանը առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակի կողմից 29/05/2009 թվականին տրված համար 2501234 սեփականության իրավունքի գրանցման վկայականով:

1.3.Վարձակալության հանձնելու պահին անշարժ գույքը ունի գրանցված սահմանափակումներ չունի, համաձայն 06/09/2019 թվականին տրված համար ՄՏ-06092019-02-0288 միասնական տեղեկանք:

Լրացուցիչ նշում՝ Կադաստրային ծածկագրերը համապատասխանեցված է գործող կարգին: Օտման գործարքներից ծագող իրավունքների նոր պետական գրանցում կկատարվի իրավասու մարմնի կողմից հացեի որոշում ներկայացնելու դեպքում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1.պահանջել Վարձատուից սույն պայմանագրով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.

3. Հաշվարկները

3.1. Վարձավճարը կազմում է 100,000/հարյուր հազար/ << դրամ ներառյալ օրենքով նախատեսված բոլոր հարկերը:

3.3. Վարձակալը վարձավճարը վճարում է մինչև յուրաքանչյուր ամիս փոխանցելով վարձատուի կողմից ներկայացված հաշվեհամարին:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2 Պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

6.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

6.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

6.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝

6.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը

պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

6.2.2 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագիրը կարող է լուծվել նախապես կողմերից մեկի կողմից 2 ամիս առաջ նախապես ծանուցելով մյուս կողմին:

6.2.3 Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելուն հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներն բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

6.2.4. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

6.2.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

6.2.6 Եթե տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա կողմերի հետագա պարտավորությունները շարունակվում են համաձայնագիր կնքելու միջոցով:

6.2.7. Եթե Վարձակալը պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

6.2.8. Վարձակալը սույն պայմանագրում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ չվճարված վարձավճարի

0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Վարձավճարի չվճարման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար Վարձակալը վճարում է տույժ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

6.2.9. Եթե Վարձակալը ₤պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Օբյեկտը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

6.2.10. Եթե պայմանագրի կնքումից հետո ի հայտ են գալիս թերություններ, որոնք Վարձատուն չի նշել սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի չի եղել Վարձակալին, Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Վարձատուն պատասխանատվություն չի կրում Օբյեկտի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին:

7. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք:

9.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում,եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից:

9.2. Կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբեության կամ սպառնալիքի ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին, ինչպես նաև կողմերը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում կեղծ փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում միմյանց հասցված նյութական և բարոյական վնասի համար:

ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը :

10. Կողմերի վավերապայմանները

ՎԱՐՁԱՏՈՒ

ՎԱՐՁԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետության անունից, քաղաք Երևան

Երկու հազար տասնինը թվականի սեպտեմբերի իննին սույն պայմանագիրը վավերացված է իմ **ԵՐԵՎԱՆ** նոտարական տարածքի նոտար **ԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ** կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները ստուգված են:

ՀՀքաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում 7049

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն Պետական տուրքի մասին և Նոտարիատի մասին Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար՝ Աննա Լևոնի Ղազարյան

## 5. ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ

| | |
|---|---|
| ՀՀ դրամով փոխանցումներ | |
| Քարտային հաշվի համար՝ | 220091261960000 |
| Ստացող՝ | Գրիգոր Աղաբաբյան |
| ԱՄՆ դոլարով փոխանցումներ | |
| Intermediary bank: | Standard Chartered Bank, New York, USA; SWIFT: SCBLUS33 |
| Correspondent bank: | Raiffeisen Bank International AG, Address: Am Stadtpark 9, 1030 Vienna, Austria, SWIFT: RZBAATWW |
| Beneficiary Bank: | ACBA-CREDIT AGRICOLE BANK, 0002, 82-84 Aram street, Yerevan Armenia; SWIFT: AGCAAM22 |
| Beneficiary: | Grigor Aghababyan |
| Beneficiary account: | 220091261960000 |
| Եվրոյով փոխանցումներ | |
| Correspondent bank: | COMMERZBANK AG, GERMANY; SWIFT: COBADEFF |
| Beneficiary Bank: | ACBA-CREDIT AGRICOLE BANK, 0002, 82-84 Aram street, Yerevan Armenia; SWIFT: AGCAAM22 |
| Beneficiary: | Grigor Aghababyan |
| Beneficiary account: | 220091261960000 |
| IBAN | IBAN-ը բանկային հաշվի միջազգային համարն է: Հայաստանյան բանկերի համակարգերը չունեն IBAN, դրա փոխարեն կարող ենք տրամադրել հետևյալ հաշվի համարը՝ AM220091261960000 |
| ՌԴ ռուբլով փոխանցումներ | |
| Correspondent bank: | Сбербанк России, БИК: 044525225, К/С : 30101810400000000225, ИНН: 7707083893, SWIFT: SABRRUMM012 |
| Beneficiary Bank: | АКБА-КРЕДИТ АГРИКОЛ БАНК ЗАО, корреспондентский счет банка в Сбербанке России:30111810200000000521 |
| Beneficiary: | Grigor Aghababyan |
| Beneficiary account: | 220091261960000 |

[1] Քարտի գործողության ժամկետի վերջին ամսվա ընթացքում Բանկը համաձայն Բանկում գործող կարգի վերաթողարկում է քարտը և գանձում սակագներով նախատեսված սպասարկման միջնորդավճարը, եթե Քարտապանը քարտի գործողության ժամկետի ավարտից մեկ ամիս առաջ չի հայտնել Բանկին իր քարտը չվերաթողարկելու ցանկության մասին:

2 Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել և լրացնել քարտի սպասարկման սակագները, ինչի մասին պարտավոր է ծանուցել Քարտապանին՝ [illegible]